

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔԱՂԱԴՅԱՆ ԳԱԳԻԿ ԶԱՐՄԱՎԻՐԻ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների
տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ Ներսիկի Հախվերդյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան Սերյոժայի Մարտիրոսյան
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Անի Գրիգորի Ավետիսյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի հուլիսի 30-ին, ժամը 14⁰⁰-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի հունիսի 28-ին:

**008 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ի.Բ. Պետրոսյան

Հերազդություն թեմայի արդիականությունը: Տարածքային զարգացման անհամաչափությունը մեծազույց հիմնախնդիր է աշխարհի բոլոր երկրների համար, ինչը ենթադրում է, որ գործնականում անհնար է առանձնացնել որևէ երկիր, որտեղ առկա չեն ձևավորված որոշակի անհամաչափություններ: Այդ անհամաչափությունները տարբեր երկրներում ունեն տարբեր բնութագրիչներ և տարբեր երկրներում հասնում են տարբեր մակարդակների:

Անկախ այդ բնութագրիչներից և մակարդակներից բոլոր երկրներում առկա է անհրաժեշտություն իրականացնելու տարածքային այնպիսի քաղաքականություն, որը կնպաստի տվյալ երկրում տարածքային միավորների զարգացման մակարդակների միջև առկա անհամապատասխանությունների վերացմանը: Բնականաբար, հնարավոր չէ մշակել և իրագործել այնպիսի քաղաքականություն, որը կարող է իսպառ վերացնել քննարկվող անհամաչափությունները, սակայն դրանք, ի հաշիվ արդյունավետ մշակվող և իրականացվող քաղաքականության, կարող են հասցվել նվազագույնի:

Նշյալ հիմնախնդիրը հատկապես հրատապ է սոցիալ-տնտեսական զարգացման այնպիսի մակարդակ ունեցող երկրներում, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, երբ երկիրը չի համարվում զարգացած, իսկ տարածքային զարգացման անհամաչափությունները, լինելով բավականաչափ բարձր, շարունակաբար ընդլայնվում են և ունեն ընդլայնման հստակ միտումներ: Այս պարագայում, Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման անհամաչափությունների ուսումնասիրությունը, դրա հիմնական բնութագրիչների առանձնացումը, առկա հիմնախնդիրների դուրսբերումը, տարածքային զարգացման անհամաչափությունների չափումները և դրանց հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տարածքային քաղաքականության կատարելագործումը անհրաժեշտություն են:

Եվ անկախ այն հանգամանքից, որ ուսումնասիրության թեմային առնչակից հետազոտություններ բազմիցս կատարվել են ինչպես հայաստանյան, այնպես էլ օտարերկյա հետազոտողների կողմից, միևնույն է, հաշվի առնելով հիմնախնդրի առկայությունը և դրա շարունակական խորացումը՝ կարող ենք պնդել, որ հետազոտության թեման այսօր ավելի արդիական է, քան երբևէ:

Հերազդության նպատակը և խնդիրները: Առենախոսության հիմնական նպատակն է գնահատել ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների ներկայիս մակարդակը, դուրս բերել ՀՀ տարածքային քաղաքականության հիմնախնդիրները և առաջ քաշել կառուցակարգեր, որոնք կարող են նպաստել ՀՀ տարածքային քաղաքականության կատարելագործմանը և հիմնախնդիրների լուծմանը: Նշյալ նպատակի իրագործման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել տարածքային զարգացման և տարածքային քաղաքականության էությունը և հիմնական առանձնահատկությունները,
2. մշակել մոդել, որի կիրառմամբ, վիճակագրության առկայության պայմաններում, հնարավոր կլինի դինամիկ կերպով չափել տարբեր երկրների տարածքային զարգացման անհամաչափությունների աստիճանը, ինչպես նաև կիրառել նշյալ մոդելը մի շարք երկրների համար,
3. ուսումնասիրել տարածքային զարգացման անհամաչափությունների միջազգային փորձը և առանձնացնել այն երկրները, որոնց տարածքային զարգացման անհամաչափություններն ունեն նվազման միտում, ինչը թույլ կտա նման հաջող փորձ ունեցող երկրների տարածքային քաղաքականությունների ուսումնասիրությամբ որոշակի տարրեր տեղայնացնել ՀՀ-ում,

4. ուսումնասիրել ՀՀ տարածքային քաղաքականությունը, տարածքային զարգացման համապետական, մարզային և համայնքային ռազմավարություններն ու ծրագրերը՝ բացահայտելով դրանցում առկա հիմնախնդիրները և այն ուժեղ կողմերը, որոնց հիման վրա հնարավոր կլինի ապահովել քաղաքականության կատարելագործում,

5. իրականացնել ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատում, որը կհիմնվի ինչպես ցուցանիշների դինամիկ և կառուցվածքային ուսումնասիրության, այնպես էլ մոդելային գնահատումների վրա,

6. հետազոտել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակը և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրները, ինչպես նաև գնահատել, թե որքանով են համայնքների ֆինանսական կարողությունները բխում ՀՀ-ում տարածքային համաչափ զարգացում ապահովելու գաղափարախոսությունից,

7. մշակել կառուցակարգեր, որոնք կնպաստեն համայնքների ֆինանսական կարողությունների բարելավմանը, կհանգեցնեն ՀՀ-ում տարածքային համաչափ զարգացման քաղաքականության արդյունավետության բարձրացման և ուղղված կլինեն ՀՀ տարածքային զարգացմանը համաչափություն հաղորդելուն:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացումն է՝ որպես գործընթաց և որպես համակարգ, իսկ հետազոտության առարկան Հայաստանի Հանրապետության տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրներն են ու վերջիններիս լուծմանն ուղղված մոտեցումները:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել հայաստանյան և օտարերկրյա մի շարք հետազոտողների կողմից հեղինակված, թեմային առնչակից հրապարակումներ, հոդվածներ և գրքեր: Ատենախոսության համար տեսամեթոդական էական աղբյուր են հանդիսանում նաև ՀՀ մի շարք օրենսդրական և ենթօրենսդրական ակտեր, զարգացման եռամակարդակ ծրագրեր ու ռազմավարություններ: Ատենախոսության շրջանակներում կիրառվել են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են դինամիկ և կառուցվածքային վերլուծությունը, գործոնային վերլուծությունը, փորձագիտական գնահատումը, անալոգիան, ինդուկցիան և դեդուկցիան, վիճակագրական փաթեթի կիրառմամբ տնտեսամաթեմատիկական չափումները, վիճակագրական հաշվարկները և այլն: Հետազոտության շրջանակներում իրականացվել են նաև աղյուսակային և գրաֆիկական դիտարկումներ, որի համար հիմք են հանդիսացել ատենախոսությունում ներկայացված թվով 30 աղյուսակները և թվով 41 գծապատկերները: Հետազոտության համար տեղեկատվական աղբյուր են հանդիսացել ինչպես ՀՀ, այնպես էլ այլ երկրների պաշտոնական վիճակագրական մարմինների հրապարակումները, ինչպես նաև ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հրապարակված մի շարք տվյալներ:

Հետազոտության գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում առաջ են քաշվել հետևյալ գիտական նորույթները.

1. Սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող թվով 9 ցուցանիշների և փորձագիտական գնահատում-հարցումների հիման վրա մշակվել է երկրների տարածքային միավորների զարգացման ինդեքսների և տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատման մոդել, որը հեղինակի կողմից կիրառվել է թվով 16 երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար (2012-2021 թթ. տվյալներով):

2. ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների որակական և քանակական գնահատման համար հեղինակի կողմից մշակվել և առաջարկվել է մոդել, որը հիմնված է թվով

19 ցուցանիշների և SPSS վիճակագրական փաթեթի կիրառմամբ գործոնային վերլուծության վրա (2021 թ. տվյալներով):

3. ՀՀ համայնքների բյուջետային կարողությունների և զարգացման մակարդակների համապատասխանության բացահայտման նպատակով մշակվել է մեթոդաբանություն՝ հիմնված քվանտիլային խմբերի կիրառման ու արդյունքների համադրման վրա:

4. Մշակվել են համայնքների ֆինանսական կարողությունների և զարգացման մակարդակների համապատասխանության ապահովմանն ուղղված կառուցակարգեր, այդ թվում՝ ներկայացվել են դոտացիաների հաշվարկման և եկամտային հարկից ու շահութահարկից մասհանումների իրականացման մոդելներ, տրվել են դրանց արդյունավետության գնահատականները:

Հեղազոտության արդյունքների գիտազործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության արդյունքները կարող են նպաստել Հայաստանի Հանրապետության տարածքային համաչափ զարգացմանն ուղղված քաղաքականության բարելավմանը: Ատենախոսության արդյունքները կարող են տեսական և գործնական կիրառություն ունենալ բոլոր շահագրգիռ կողմերի համար: Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել ՀՀ կառավարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ մարզպետարանների և մարզպետների, ՀՀ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, այլ պետությունների կառավարման մարմինների, հայազգի և օտարազգի հետազոտողների, գիտնականների, ուսանողների և այլ շահագրգիռ կողմերի կողմից: Հետազոտության արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են 10 գիտական հոդվածներում, որոնցից 1-ը՝ Scopus շտեմարանում ընդգրկված ամսագրում, 8-ը՝ ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի պարբերականներում, և 1-ը՝ գիտաժողովի նյութերում:

Հեղազոտության ծավալը և կառուցվածքը: Հետազոտության կառուցվածքը բխում է սահմանված նպատակից և խնդիրներից: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը ներառում է 178 էջ (առանց հավելվածների):

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** ներկայացվել են ատենախոսության թեմայի արդիականությունը, նպատակները և խնդիրները, սահմանվել են հետազոտության օբյեկտը և առարկան, ներկայացվել են հետազոտության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, ամփոփվել են ատենախոսությամբ ստացված հիմնական արդյունքները, ինչպես նաև ներկայացվել են արդյունքների հնարավոր կիրառությունը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Տնտեսության տարածքային զարգացման հիմքերն ու հիմնական բնութագրերը», անդրադարձ է կատարվել տարածքային համաչափ զարգացման էությանը և դրա տեսամեթոդական հիմքերին: Այս գլխով ներկայացվել են նաև տարածքային քաղաքականության էությունը և դրա հնարավոր ազդեցությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Գլուխը ավարտվել է տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատման մեթոդաբանության մշակմամբ և դրա միջոցով թվով 15 երկրներում տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատմամբ: Արդյունքում, առանձնացվել և դիտարկվել են նաև այն երկրների տարածքային քաղաքականության

բնութագրիչները, որոնցում տարածքային զարգացման անհամաչափություններն ունեն նվազման միտում:

Տարածքային զարգացման անհամաչափություններ առկա են բոլոր երկրներում, սակայն դրանք առավել բնորոշ են հատկապես անցումային և զարգացող երկրներին¹: Այդ անհամաչափությունները պայմանավորված են աշխարհագրական, բնակլիմայական, ժողովրդագրական և տնտեսական գործոններով²:

Տարածքային զարգացման օբյեկտը տարածքային միավորն է՝ տարածաշրջանը, վերջինս սեփական կարիքները բավարարող սոցիալական օրգանիզմ է, որին բնորոշ են ֆիզիկաաշխարհագրական, քաղաքակրթական, տնտեսական, պատմաշակութային, քաղաքական, վարչական և իրավական որոշակի անկախություն ու առանձնահատկություններ³: Տարածքային միավորների անհամաչափ զարգացումը մեղմելու և վերացնելու, տարածքային զարգացմանը համաչափություն հաղորդելու համար յուրաքանչյուր երկրում իրականացվում է պետական տարածքային քաղաքականություն⁴: Տարածքային քաղաքականության արդյունավետությունն արտահայտվում է տարածքային զարգացման անհամաչափությունների մեղմմամբ, որի վերաբերյալ դիրքորոշում հնարավոր է ունենալ միայն այդ անհամաչափությունները գնահատելու միջոցով: Տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատման համար ատենախոսության շրջանակներում մշակված մոդելը հիմնվում է սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող հետևյալ հարաբերական 9 ցուցանիշների վրա՝ *համախառն արտադրանք՝ 1 շնչի հաշվով, տնային տնտեսությունների միջին սպառողական ծախսեր, միջին անվանական աշխատավարձ, աղքատ չհամարվող բնակչության տնտեսապարար կշիռ ընդհանուրում, զբաղվածության մակարդակ, բնակչության խտություն, երիտասարդ բնակչության տնտեսապարար կշիռ ընդհանուրում, կրթական և բժշկական ծառայությունների հասանելիություն՝ մանկավարժների և բուժանձնակազմի թվաքանակ: Մոդելում այս ցուցանիշների կշիռները ստացվել են փորձագիտական հարցման միջոցով, որին մասնակցել են թվով 131 մասնագետներ՝ տնտեսագիտության դոկտորներ, տնտեսագիտության թեկնածուներ, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ Ֆինանսների, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություններում և ՀՀ ՊԵԿ-ում ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատակիցներ: Մոդելը ատենախոսության առաջին գլխում կիրառվել է թվով 15 երկրների համար, որոնք, ըստ տարբեր դասակարգումների, ունեն զարգացման տարբեր մակարդակներ: Մոդելով առաջին հերթին գնահատվել է այդ երկրների տարածքային միավորների զարգացման աստիճանը հետևյալ բանաձևի կիրառմամբ՝*

$$Dhj = \sum(Wi * (Xnij/\max(Xnij))) / \sum(Wi) \quad (1)$$

Որտեղ՝ Dlnj-ը n-րդ տարածքային միավորի զարգացման ինդեքսն է j-րդ տարում, Wi-ը i-րդ ցուցանիշի կշիռն է, Xnij-ը n-րդ տարածքային միավորի j-րդ տարում i-րդ ցուցանիշն է, max(Xnij)-ը երկրի տարածքային միավորների j-րդ տարում i-րդ ցուցանիշի շարքի առավելագույն արժեքն է:

Երկրների տարածքային միավորների զարգացման ինդեքսների հիման վրա հաշվարկվել են տարածքային զարգացման անհամաչափությունների ինդեքսները՝ կիրառելով հարաբերական ստանդարտ շեղման բանաձևը:

$$DDIj = \sqrt{(\sum(DInj - \text{mean}(DInj))^2/n) / (\text{mean}(DInj))} \quad (2)$$

Որտեղ՝ DDIj-ը j-րդ տարում երկրի տարածքային անհամաչափ զարգացման ինդեքսն է, Dlnj-ը n-րդ տարածքային միավորի զարգացման ինդեքսն է j-րդ տարում, mean(Dlnj)-ը j-րդ տարում տարածքային միավորների զարգացման միջին ինդեքսն է, n-ը տարածքային միավորների քանակն է:

¹ Տարածական զարգացում/ Կ. Գիլգորյան և ուրիշ. – Եր.: Տնտեսագետ, 2014 – 88 էջ: («Ամբերկ» մատենաշար), էջ 6:

² Լիագորությունների ապակենտրոնացումը որպես տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման ուղղություն / Մ. Մովսիսյան և ուրիշներ. – Եր.: Տնտեսագետ, 2023. - 157 էջ: («Ամբերկ» մատենաշար 60), էջ 18:

³ Н. Н. Киселева, Н. В. Данченко, В. В. Браткова, «Государственная региональная политика // Ставрополь 2015, стр. 14.

⁴ Региональная политика. Учебное пособие, Перенджиев А.Н., Злотникова Е.В., Чумаченко А.П., Хохлова А.В., Москва 2020, стр. 12.

Արդյունքում, դիտարկված 15 երկրներից միայն *Կանադայում, Բուլղարիայում, Հունգարիայում, Ֆինլանդիայում, Սերբիայում, Վրաստանում և Ղազախստանում* են նկատվել տարածքային զարգացման անհամաչափությունների նվազման միտումներ: Այդ երկրները համարվել են էտալոնային, և դրանց մասով իրականացվել է տարածքային քաղաքականության ուսումնասիրություն՝ դրանց որոշ տարրեր ՀՀ-ում տեղայնացնելու նպատակադրմամբ:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «ՀՀ տարածքային զարգացման հիմնական առանձնահատկությունները», անդրադարձ է կատարվել ՀՀ տարածքային զարգացման ինստիտուցիոնալ հիմքերին, այս գլխով գնահատվել են ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի կորոզիանցման գործընթացում առկա օրենսդրական և ֆինանսական հիմնախնդիրներին:

ՀՀ-ում տարածքային զարգացման քաղաքականության հիմքը ՀՀ Սահմանադրությունն է, համաձայն որի՝ պետության տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում քաղաքականության հիմնական նպատակներից է *փարածքային համաչափ զարգացումը*⁵: ՀՀ-ում տարածքային քաղաքականությունը հիմնված է *փարածքային համաչափ և կայուն զարգացման* սկզբունքի վրա⁶: ՀՀ վարչատարածքային միավորները 10 մարզերն ու 71 համայնքներն են⁷: ՀՀ տարածքային քաղաքականության էական բաղադրիչներ են համայնքների խոշորացման գործընթացը և տարածքային աճի բևեռների զարգացման նպատակադրումը, իսկ կարևորագույն առանձնահատկություն է այն, որ ՀՀ-ում տարածքային քաղաքականությունը հիմնված է ռազմավարական կառավարման սկզբունքների վրա, որոնք առավելապես կենտրոնանում են այնպիսի նպատակների իրագործման վրա, ինչպիսիք են բոլոր մարզերում մրցունակության բարձրացումը, տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովումը, տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավումը զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում⁸: Սակայն խնդիրն այն է, որ ՀՀ տարածքային զարգացման ռազմավարության կատարողականն ամենաարդյունավետը չէ, և խնդիրներ առկա են ինչպես բովանդակային, այնպես էլ ձևական պահանջներում, որի պարագայում դժվար է ակնկալել ռազմավարությամբ սահմանված նպատակների ամբողջական ապահովում ռազմավարության ավարտին: Բայց պետք է նաև արձանագրել, որ խնդրի լուծման գործընթացում ռազմավարական կառավարման համակարգի առկայությունն արդեն իսկ բավականաչափ կարևոր դրական երևույթ է⁹: Այդ կառավարման համակարգը եռամակարդակ է, և բացի համապետական ռազմավարությունից, գործում են նաև մարզային զարգացման ռազմավարություններ և համայնքային զարգացման ծրագրեր: Սակայն այս դեպքում խնդիրներն ավելի սուր են, քանի որ ռազմավարություններում և ծրագրերում առկա են համընկնումներ, հաճախ նաև բառացի¹⁰:

Արդյունքում, ՀՀ-ում տարածքային զարգացման անհամաչափությունները հասնում են բավականին բարձր մակարդակի, որն իր արտահայտումն ունի ինչպես առանձին

⁵ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), ընդ.՝ 05.07.1995 թ., փոփ.՝ 06.12.2015 թ., <https://www.irtek.am/Views/act.aspx?aid=150151>, 27.02.2024 թ. 20:14, հ. 86:

⁶ Հայաստանի Հանրապետության օրենքը «Տարածքային կառավարման մասին», ընդ.՝ 14.11.2019 թ., փոփ.՝ 24.05.2023 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=178970>, 27.02.2024 թ. 20:16, հ. 3:


⁷ Հայաստանի Հանրապետության օրենքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», ընդ.՝ 07.11.1995 թ., <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165211>, 27.02.2024 թ. 20:28, 09.06.2022 թ. խմբագրությամբ, հավելված 2:

⁸ Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.07.2016 թ. նիստի թիվ 29 արձանագրային որոշում, հավելված, «Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարություն», <https://www.arlis.am/documentview.aspx?docid=107717>, 27.02.2024 թ. 20:39, հավելված, կետ 1:

⁹ The current implementation and expectations of execution of RA territorial development strategy for 2016-2025, Gagik Badadyan, "Region and The World", 2022, №2, pp. 141-149.

¹⁰ The Foundations of the RA Territorial Development Policy, Gagik Badadyan, "Region and The World", 2023, №5, pp. 127-132.

ցուցանիշների կառուցվածքում և դինամիկայում, այնպես էլ մարզերի զարգացման ինդեքսներում (գծապատկեր 1):




Գծապատկեր 1. ՀՀ մարզերի և Երևանի զարգացման ինդեքսները¹¹

ՀՀ-ում զարգացման մակարդակով առաջատար տարածքային միավորները Երևանն ու Սյունիքի մարզն են: 2021 թ. տվյալներով, Երևանի զարգացման ինդեքսը կազմում է 83.208 միավոր, իսկ Սյունիքի մարզի զարգացման ինդեքսը՝ 76.581 միավոր: Սյունիքի և Երևանի զարգացման ինդեքսների միջև առկա տարբերությունը 2012-2021 թթ. բավականաչափ փոքրացել է: Այդ տարբերության կրճատումն առաջին հայացքից ստեղծում է տպավորություն, որ տարածքային զարգացման անհամաչափությունները ՀՀ-ում կրճատվում են, սակայն Սյունիքի մարզի և Երևանի ցուցանիշների միջև առկա տարբերությունների կրճատումն ուղեկցվել է մյուս մարզերի և այդ երկու տարածքային միավորների միջև առկա տարբերությունների մեծացմամբ: Բայց այն հանգամանքը, որ ՀՀ-ում արդեն իսկ հստակորեն ձևավորվում են զարգացման երկու բևեռներ, կարող է համարվել դրական երևույթ: Ինչ-որ չափով այդ բևեռների ձևավորման արդյունքում է, որ Սյունիքի մարզին և Երևանին հարակից մարզերը (Արարատ, Արագածոտն, Արմավիր, Կոտայք և Վայոց Ձոր) ունեն առաջանցիկ զարգացում:

Տարածքային զարգացման անհամաչափությունների ընդլայնման մասով իրավիճակը ՀՀ-ում բավականաչափ վատթար է, քանի որ տարածքային միավորների զարգացման ինդեքսների առավելագույն և նվազագույն ցուցանիշների տարբերությունը 2012-2021 թվականներին մեծացել է՝ 2021 թ. կազմելով 36.261: Նվազագույն և առավելագույն ցուցանիշների այդ տարբերությունը վկայում է, որ ՀՀ-ում տարածքային զարգացման անհամաչափությունները բավականաչափ խորն են, ավելին, դրանց բնորոշ է ընդլայնում: Այդ փաստարկը հիմնավորվում է նաև գրաֆիկական դիտարկմամբ, համաձայն որի՝ նվազագույն և առավելագույն ցուցանիշների թրենդների միջև եղած հեռավորությունն ունի ընդլայնման միտում: Տարածքային զարգացման անհամաչափությունների բարձր մակարդակի և դրանց ընդլայնման մասին է վկայում նաև տարածքային անհամաչափ զարգացման ինդեքսը, որը 2021 թ. կազմել է 17.2%, որը, ի համեմատ միջազգային փորձի, բարձր ցուցանիշ է՝ հաշվի առնելով այն, որ հաշվարկը 11 տարածքային միավորների համար է: Բացի այդ, իրավիճակի վատթարացման մասին է վկայում նաև տարածքային անհամաչափ զարգացման ինդեքսի փոփոխման թրենդի դիրքը. այն դրական թեքվածությամբ ուղիղ է (գծապատկեր 2)¹²:

¹¹ Հաշվարկները՝ հեղինակի կողմից, տվյալների աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ, տարածքային վիճակագրություն ժողովածուներ, <https://www.armstat.am/am/?nid=651>, 28.02.2024 թ. 9:03:
¹² Assessment of disproportionate territorial development based on the example of the Republic of Armenia, Gagik Badadyan, "ASUE Messenger", 2023 N3, p. 50-60.



Գծապարկեր 2. ՀՀ մարզերի և Երևանի զարգացման ինդեքսների փոփոխության դինամիկան, ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների ինդեքսը, 2012-2021 թթ.¹³

ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատման համար իրականացվել է նաև գործոնային վերլուծություն¹⁴ 19 ցուցանիշների կիրառմամբ, արդյունքում ստացվել են 4 գործոններ, որոնց գործոնային ծանրաբեռնվածությունը կարող ենք մեկնաբանել հետևյալ կերպ. ստացված առաջին գործոնը բավականին ուժեղ և դրական կապի մեջ է գտնվում մանրածախ առևտրաշրջանառության և ծառայությունների ծավալի, տնային տնտեսությունների սպառողական ծախսերի, բնակչության խտության ու մթնոլորտային արտանետումների, ինչպես նաև բժշկական ծառայությունների հասանելիության հետ: Այն հակադարձ և ուժեղ կախվածության մեջ է գյուղատնտեսության հետ: Ակնհայտ է, որ այս գործոնից բարձր գնահատական կարող են ստանալ այն տարածքային միավորները, որոնք կա՛մ քաղաք են, կա՛մ դրանցում ներառված են զարգացած քաղաքային բնակավայրեր: Այդ հանգամանքով պայմանավորված՝ գործոնն անվանենք «քաղաքային միավորների զարգացում»: Երկրորդ գործոնի դեպքում դրական և ուժեղ կապեր են արտահայտվել հանքարդյունաբերության, շինարարության ծավալների և միջին ամսական անվանական աշխատավարձի հետ, իսկ աղքատության մակարդակը գործոնի հետ ունի հակադարձ և ուժեղ կախվածություն: Ակնհայտ է, որ այս գործոնին բնորոշ է զարգացած հանքարդյունաբերություն, որն արտահայտվում է աշխատավարձերի բարձր և աղքատության ցածր մակարդակներով, դրանով պայմանավորված՝ գործոնը անվանենք «խոշոր հանքարդյունաբերական կենտրոնների զարգացում»: Երրորդ գործոնից բարձր գնահատականներ բնորոշ են այն տարածքային միավոր-

¹³ Հաշվարկները՝ հեղինակի կողմից, տվյալների աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ, տարածքային վիճակագրություն ժողովածուներ, <https://www.armstat.am/am/?nid=651>, 28.02.2024 թ. 9:03:
¹⁴ ՀՀ տարածքային անհամաչափ զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները արդի պայմաններում. Համազասպ Գալստյան, Գազիկ Բաղդասյան, «Բանբեր ՀՊՏՀ», 2020՝ N1, էջ 38-53:

ներին, որոնցում զարգացած է մշակող արդյունաբերությունը, իսկ կրթական ծառայությունների հասանելիությունը բնութագրող ցուցանիշները համեմատաբար փոքր են: Որոշակի դրական կապ առկա է նաև անասնաբուծության, առևտրի ու ծառայությունների, ինչպես նաև սպառողական ծախսերի ու աշխատավարձերի բարձր մակարդակի հետ: Այս պարագայում գործոնը կարող է անվանվել «տնտեսական հանգույցների զարգացում»: Չորրորդ գործոնը բնութագրվում է գյուղատնտեսության՝ հատկապես անասնաբուծության զարգացմամբ ու զբաղվածության բարձր մակարդակով, իսկ բժշկական ծառայությունների հասանելիությունն ամենաբարձր մակարդակում չէ: Ակնհայտ է, որ գործոնը նման բնութագրեր ունենալու դեպքում կարող է անվանվել «գյուղատնտեսական կենտրոնների զարգացում»: Մարզերի ստացած գործոնային գնահատականները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՀՀ մարզերի և Երևանի գործոնային գնահատականները


	Գործոն I	Գործոն II	Գործոն III	Գործոն IV
Տավուշ	-0.176	-0.703	-0.491	-0.747
Վայոց Ձոր	-0.073	0.003	-0.929	-0.207
Սյունիք	-0.335	2.811	-0.430	-0.049
Շիրակ	-0.202	-0.730	-0.245	-0.770
Կոտայք	-0.596	0.210	1.200	-0.719
Լոռի	-0.125	-0.205	-0.500	-0.604
Գեղարքունիք	-0.652	-0.843	0.025	-0.567
Արմավիր	-0.104	-0.458	0.555	2.437
Արարատ	-0.824	0.051	1.808	0.338
Արագածոտն	0.208	-0.226	-1.656	1.204
Երևան	2.878	0.091	0.762	-0.316

«Քաղաքային միավորների զարգացում» գործոնով առաջատար է Երևանը, որը առաջանցիկ դիրք ունի մարզերի նկատմամբ: ՀՀ 10 մարզերից գործոնային դրական գնահատական է ստացել միայն Արագածոտնը: Մնացյալ դեպքերում գնահատականները բացասական են: Նման իրավիճակը վկայում է, որ Երևանը ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների հաղթահարման գործընթացում պետք է հանդես գա որպես զարգացման քաղաքային բևեռ: «Խոշոր հանքարդյունաբերական կենտրոնների զարգացում» գործոնի դեպքում առաջատարը Սյունիքի մարզն է: Ոչ այդքան բարձր, բայց համեմատականորեն բարձր արդյունք է գրանցվել նաև Կոտայքի մարզում: Այս մարզերը կարող են հանդես գալ որպես հանքարդյունաբերական համալիրների զարգացման բևեռներ: «Տնտեսական հանգույցների զարգացում» գործոնով բարձր միավորներ են ստացել Արարատի, Կոտայքի, Արմավիրի մարզերը և Երևանը: Այս տարածքային միավորները՝ որպես տնտեսական հանգույցներ, կարող են կատարել «շոգեքարշի» դեր՝ միավորել բոլոր տարածքային միավորների տնտեսական հնարավորությունները: Իսկ ահա «գյուղատնտեսական կենտրոնների զարգացում» գործոնով առաջատար եռյակն Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերն են, որոնք բովանդակային առումով արդեն իսկ գյուղատնտեսական զարգացման բևեռներ են:

Այս համատեքստում հարկ են համարում նաև արձանագրել, որ 2021 թվականի տվյալներով զարգացման ինդեքսով 5 քվանտիլային խմբերից 1-ինում ընդգրկված 3 ետնապահ մարզերը (Տավուշ, Շիրակ և Գեղարքունիք) և 5-րդ քվանտիլում ընդգրկված 2 առաջատար տարածքային միավորները (Երևան և Սյունիք) զբաղեցնում են զարգացման նույն հորիզոնականները նաև գործոնային վերլուծությամբ ստացված զարգացման գնահատականներով, եթե գործոնային վերլուծությամբ ստացված զարգացման գնահատական համարենք գործոնային

գնահատականների և գործոնների կողմից բացատրվող վարիացիայում գործոնների սեփական արժեքների կշռված միջին գնահատականը: Իսկ մնացյալ մարզերը, ունենալով համեմատաբար միջին զարգացման մակարդակ, երկու դեպքում էլ գտնվում են 3-8-րդ հորիզոնականներում: Նման իրավիճակը վկայում է կիրառված երկու մեթոդների արդյունավետ լինելու հանգամանքի մասին, քանի որ մեթոդներից յուրաքանչյուրը հիմնավորում է մյուսի արդյունավետությունը:

Տարածքային զարգացման անհամաչափությունները և տարածքային միավորների ֆինանսական հնարավորությունները. Տարածքային զարգացման անհամաչափությունների հաղթահարման համար տարածքային քաղաքականության իրականացումն անհրաժեշտություն է, որը պետք է հիմնվի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման կայուն համակարգերի վրա: ՀՀ-ում այդ մասով լիազորությունների մեծ մասը դրված է ՏԻՄ-երի վրա, սակայն խնդիրն այն է, որ լիազորությունների ապակենտրոնացումը չի ուղեկցվել ֆինանսական ապակենտրոնացմամբ, և արդյունքում, 2022 թ. տվյալներով ՀՀ մարզերում համայնքների ֆինանսական անկախության գործակիցը միջինում կազմել է ընդամենը 29%¹⁵: Խնդիրներ առկա են նաև ֆինանսական կարողությունների անհամաչափությունների տեսանկյունից, քանի որ համայնքների ֆինանսական կարողությունները շարունակաբար տարբերակվել են (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. ՀՀ մարզերում համայնքների բյուջետային փաստացի ընդհանուր եկամուտները՝ հաշվարկված 1 շնչի համար (դրամ)¹⁶

Խոսելով տարածքային միավորների զարգացման մակարդակներից և դրանց ֆինանսական հնարավորությունների՝ անհրաժեշտություն է առաջանում քննարկել նաև, թե որքանով են դրանք փոխկապակցված: Այդ նպատակով կիրականացնենք դրանց դեցիլային խմբերի համեմատություններ (աղյուսակ 2):

Մարզերի զարգացման մակարդակների և դրանցում ընդգրկված համայնքների բյուջետային ընդհանուր եկամուտների միջև առկա է բավականաչափ բարձր մակարդակի ուղիղ համեմատական փոխկապակցություն: Դա 2021 թվականին արտահայտվել է նրանով, որ թվով 10 մարզերից 9-ի դեպքում տարածքային զարգացման ինդեքսի քվանտիլը համընկել կամ

¹⁵ Հաշվարկները՝ հեղինակից, տվյալների աղբյուր՝ ՀՀ ՏԿԵ նախարարություն, ՀՀ համայնքների բյուջետային եկամուտները, https://www.mtad.am/pages/budgetary-revenues-ra-communities?file=panel5873&fbclid=IwAR2eVvKhl6TK9-WMUDuqghTTQdFVKQVMW8wfwlS_MHQFEVYIih45vGZ_XB8, 05.11.2023 թ. 15:47:

¹⁶ Հաշվարկները՝ հեղինակից, տվյալների աղբյուր՝ ՀՀ ՏԿԵ նախարարություն, ՀՀ համայնքների բյուջետային եկամուտները, https://www.mtad.am/pages/budgetary-revenues-ra-communities?file=panel5873&fbclid=IwAR2eVvKhl6TK9-WMUDuqghTTQdFVKQVMW8wfwlS_MHQFEVYIih45vGZ_XB8, 05.11.2023 թ. 15:47, ՀՀ Վիճակագրական կոմիտեի, հրապարակումներ, տարածքային վիճակագրություն, ժողովածուներ, <https://www.armstat.am/am/?nid=651>, 28.02.2024 թ. 9:03:

ընդամենը 1 աստիճանով է շեղվել մարզում ընդգրկված համայնքների 1 շնչի հաշվով ընդհանուր բյուջետային եկամուտների քվանտիլից:

Աղյուսակ 2

Մարզերի զարգացման ինդեքսների և համայնքների 1 շնչի հաշվով ընդամենը բյուջետային եկամուտների փոխկապվածություն¹⁷

Մարզ	2012		2013		2014		2015		2016		2017		2018		2019		2020		2021		
	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	
Տավուշ																					
Վայոց Ձոր																					
Սյունիք																					
Շիրակ																					
Կոտայք																					
Լոռի																					
Գեղարքունիք																					
Արմավիր																					
Արարատ																					
Արագածոտն																					
Համընկնումների և մեկ աստիճանով շեղումների քանակը	6		6		8		8		9		9		8		8		7		9		
Կորելյացիան	0.38		0.51		0.63		0.62		0.75		0.77		0.46		0.62		0.56		0.71		
	Քվանտիլ 1				Քվանտիլ 2				Քվանտիլ 3				Քվանտիլ 4				Քվանտիլ 5				
	Սյուն 1՝ 1 շնչի հաշվով ընդամենը բյուջետային եկամուտների քվանտիլը Սյուն 2՝ Զարգացման ինդեքսի քվանտիլը																				

2012-2021 թվականներին համընկնումների և 1 աստիճանով շեղումների քանակը միջինում կազմել է 8: Այսինքն, ստացվում է, որ զարգացման բարձր մակարդակ ունեցող մարզերում համայնքների ընդհանուր եկամուտներն ամենաբարձրն են, և հակառակը: Ուղիղ համեմատական և ուժեղ կախվածությունը հիմնավորվում է նաև կորելյացիայի բարձր մակարդակով, որը 2021 թ. կազմել է +0.71, իսկ 2012-2021 թթ.՝ միջինում +0.60: Նման իրավիճակը չի կարող համարվել արդյունավետ, քանի որ համեմատականորեն բարձր եկամուտները կարող են հանգեցնել առաջանցիկ աճի, իսկ եթե զարգացած մարզերում է գրանցվում առաջանցիկ աճ, ապա իրավիճակը կարող է հանգեցնել տարածքային զարգացման անհամաչափությունների ընդլայնման:

Այսինքն, պետական կառավարման մարմինները պետական և համայնքային բյուջեների փոխհարաբերությունները չեն օգտագործում տարածքային զարգացման քաղաքականության կարևորագույն նպատակի՝ տարածքային զարգացմանը համաչափություն հաղորդելու համատեքստում:

Այս պարագայում խնդիրը գտնվում է պետական բյուջեից համայնքների բյուջեների ֆինանսավորման մեխանիզմների շրջանակում: Այն, որ ներկա մեխանիզմներով ֆինանսավորումը ոչ միայն չի օգնում հաղթահարել տարածքային զարգացման անհամաչափությունները, այլև նպաստում է դրանց խորացմանը, փաստարկվում է կատարված վերլուծությամբ¹⁸:

¹⁷ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից, տվյալների աղբյուր՝ ՀՀ ՏԿԵՆ, ՀՀ համայնքների բյուջետային եկամուտները, https://www.mtad.am/pages/budgetary-revenues-ra-communities?file=pane15873&fbclid=IwAR2eVVkhl0TK9-WMLUDugghTTQdFVKQVMW8wfwIS_MHQfEVIih45vGZ_XB8_05.11.2023 թ. 15:47, ՀՀ Կիճակագրական կոմիտե, հրապարակումներ, տարածքային վիճակագրություն, տարածքային վիճակագրության ժողովածուներ, <https://www.armstat.am/am/?nid=651>, 28.02.2024 թ. 9:03:
¹⁸ Interrelations of municipal and state budgets in the Republic of Armenia and the impact of budget proportions on regional economic development, Hamazasp Galstyan, Gagik Badadyan, Kristine Tatossyan, "ASUE Messenger", 2023 N2, p. 72-86.

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Հ տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները և դրանց հաղթահարման մոտեցումները», ներկայացվել են փարածքային քաղաքականության ֆինանսական կառուցակարգերի բարելավման ուղիներ, ինչպես նաև ՀՀ փարածքային քաղաքականության շրջանակներում առկա հիմնախնդիրների լուծումներ:

ՀՀ-ում տարածքային քաղաքականության ֆինանսական կառուցակարգերը ունեն երկու հիմնախնդիր. նախ համայնքների ֆինանսական կարողությունները ՀՀ-ում խիստ տարբերակված են, և անհրաժեշտ է այդ մասով ներդնել գործիքներ, որոնք հնարավորություն կտան մեղմել այդ անհամաչափությունները: Եվ երկրորդ՝ անհրաժեշտ է մեծացնել համայնքների ֆինանսական կարողությունները, քանի որ լիազորությունների ապակենտրոնացումը չի ուղեկցվել ֆինանսական ապակենտրոնացմամբ:

Առաջարկվող լուծումների առաջին խումբը վերաբերում է համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման մեթոդաբանությանը: «Ա» մասով դոտացիաների հատկացման հիմքում առաջարկում ենք դնել համայնքների զարգացման աստիճանը, որը կարող է չափվել 1-ին և 2-րդ գլուխներում ներկայացված մոդելով: Մոդելի կիրառմամբ հնարավոր կլինի դասակարգել բոլոր համայնքները: Դոտացիաների հատկացման աստիճանակարգության սկզբունքի մասով առաջարկում ենք «ա» մասով դոտացիաներ տրամադրել զարգացման միջինից ցածր մակարդակ ունեցող բոլոր համայնքներին, ինչը բխում է տարածքային զարգացմանը համաչափություն հաղորդելու սկզբունքից: Ավելին, առաջարկում ենք միջինից ցածր զարգացման մակարդակ ունեցող համայնքներում դոտացիաները բաշխել տարբեր գործակիցներով՝ ըստ համայնքների զարգացման մակարդակների դեցիլային խմբերի (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Համայնքներին «ա» մասով դոտացիաների տրամադրման առաջարկվող գործակիցները և ծավալը՝ ըստ զարգացման մակարդակների

Համայնքների զարգացման մակարդակներով ձևավորված դեցիլային խմբերը	Դեցիլային խմբի համայնքներում «ա» մասով դոտացիաների ստացման գործակիցը և ծավալը
Դեցիլային խումբ 1	1.0*z
Դեցիլային խումբ 2	0.8*z
Դեցիլային խումբ 3	0.6*z
Դեցիլային խումբ 4	0.4*z
Դեցիլային խումբ 5	0.2*z

Առաջարկում ենք, որ զարգացման ամենացածր մակարդակ ունեցող համայնքներին «ա» մասով դոտացիաներ տրամադրվեն 1.0 գործակցով, իսկ ամեն հաջորդ դեցիլային խմբում գործակիցը նվազեցվի 0.2-ով: Հարկ ենք համարում նշել, որ այդ առաջարկով պետական բյուջեում փոփոխություններ չեն արձանագրվում, քանի որ պետական բյուջեով կարող է սահմանվել «ա» մասով ընդհանուր դոտացիաների գումարը, դրանից կարելի է նվազեցնել սահմանամերձ բնակավայրերի դոտացիաները և մնացյալ միջոցները բաշխել ըստ աղյուսակ 3-ի գործակիցների: Այդ մասով 1 համայնքին բաժին ընկնող և 1.0 գործակցով տրամադրվող դոտացիայի ծավալի հաշվարկման բանաձևը հետևյալն է.

$$z = y / (DQ1 + 0.8 * DQ2 + 0.6 * DQ3 + 0.4 * DQ4 + 0.2 * DQ5) \quad (3)$$

որտեղ՝ z-ը 1.0 գործակցով հաշվարկված, 1 համայնքին պրվող «ա» մասով դոտացիաների ծավալն է՝ առանց սահմանամերձ բնակավայրերին հարկացվող դոտացիաների, y-ը ՀՀ պետական բյուջեից համայնքային բյուջեների հարկացվող «ա» մասով դոտացիաների ընդհանուր ծավալն է՝ նվազեցված սահմանամերձ բնակավայրերին հարկացվող դոտացիաների ծավալով, DQ1-ը, DQ2-ը, DQ3-ը, DQ4-ը, DQ5-ը համապատասխանաբար 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ դեցիլային խմբերում ընդգրկված համայնքների քանակերն են:

Հաշվարկելով z ցուցանիշը և այն վերահաշվարկելով աղյուսակ 3-ում ներկայացված գործակիցներով՝ հնարավոր կլինի հաշվարկել համայնքներին տրվող «ա» մասով դոտացիաների այնպիսի ծավալ, որը բխում է թերզարգացած համայնքներին համեմատաբար բարձր և զարգացմանը համապատասխան աստիճանակարգված ֆինանսավորման տրամադրելու գաղափարից:

«Բ» մասով դոտացիաների հատկացման գործող կառուցակարգը համեմատաբար առավել բարվոք վիճակում է, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ա» մասով դոտացիա տրամադրելու հիմքը թերզարգացած համայնքների ֆինանսական կարողությունների առաջանցիկ մեծացումն է, իսկ «բ» մասով դոտացիաներ տրամադրվում են համայնքներում նվազագույն ծավալով ծախսերի ֆինանսավորման համար՝ առաջարկում ենք դիտարկել «բ» մասով դոտացիաների հաշվարկման սխեմայից «ա» մասով դոտացիաները դուրս թողնելու գաղափարը, բացի այդ առաջարկում են «բ» մասով դոտացիաների հաշվարկման մեխանիզմում ներառել համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշներ:

Համայնքների ֆինանսական կարողությունների մեծացման համար առաջարկում ենք ներդնել ՀՀ պետական բյուջե մուտքագրվող եկամտային հարկից և շահութահարկից մասհանումների համակարգ: Երկու դեպքում էլ առաջարկում ենք հաշվարկել մասհանման բազա, որը եկատային հարկի դեպքում տարածքային միավորի ռեզիդենտների կողմից աշխատավարձից վճարված եկամտային հարկն է, իսկ շահութահարկի դեպքում՝ տարածքային միավորում գործող կազմակերպությունների կողմից վճարված շահութահարկը:

Մասհանումների իրականացման համար առաջարկում ենք կիրառել տարածքային միավորների դեցիլային դասակարգման սկզբունքը, սակայն այս դեպքում առաջարկում ենք դասակարգումն իրականացնել ըստ մասհանման բազայի մեծության (որքան մեծ է մասհանման բազան, այնքան մասհանման տոկոսը լինի ցածր, և հակառակը): Ունենալով դեցիլային խմբերը՝ առաջարկում ենք յուրաքանչյուր խմբում մասհանում իրականացնել առանձին գործակիցներով (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Մասհանվող միջոցների գործակիցները՝ ըստ տարածքային միավորում գոյացած մասհանման բազայի մեծության

Դեցիլային խումբը	Մասհանման բազայի նկատմամբ կիրառվող գործակիցը	Դեցիլային խումբը	Մասհանման բազայի նկատմամբ կիրառվող գործակիցը
1	10*x %	6	5*x %
2	9*x %	7	4*x %
3	8*x %	8	3*x %
4	7*x %	9	2*x %
5	6*x %	10	1*x %

Նշյալ գործակիցների x մասը կարող է յուրաքանչյուր տարի հստակեցվել ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով՝ կախված պետական բյուջեի եկամուտներից: Այս առումով ներկայացնենք եկամտային հարկի օրինակով հաշվարկներ: Նշյալ մասով իրականացրել ենք սցենարային վերլուծություն՝ կիրառելով x-ի տարբեր մեծություններ: Բնականաբար, որքան բարձր է այդ գործակցի մեծությունը, այնքան ավելի է բարձրանում մարզերի համայնքների ֆինանսական կարողությունը: Սցենարային վերլուծության համար աղյուսակ 4-ի գործակիցներում x-ի փոխարեն կիրառել ենք 1, 2, 3, 4 և 5 մեծությունները (աղյուսակ 5):

Մարզերի համայնքների 1 շնչի հաշվով սեփական եկամուտների և եկամտային հարկի մասով հնարավոր մասհանումների հանրագումարը և դրանց մասով անհամաչափությունները՝ ըստ տարբեր սցենարների (10 մարզերի ցուցանիշների միջինի տեսքով)¹⁹

	2020	2021	2022
Մարզերի միջին՝ 1 շնչի հաշվով սեփական եկամուտները՝ առանց մասհանումների	12,323	14,958	16,994
Ֆինանսական կարողությունների անհամաչափությունները	29.32%	28.28%	24.24%
Մարզերի միջին՝ 1 շնչի հաշվով սեփական եկամուտները՝ մասհանումներով, որտեղ x=1	12,906	15,552	17,615
Ֆինանսական կարողությունների անհամաչափությունները	28.57%	27.49%	23.53%
Մարզերի միջին՝ 1 շնչի հաշվով սեփական եկամուտները՝ մասհանումներով, որտեղ x=2	13,488	16,147	18,237
Ֆինանսական կարողությունների անհամաչափությունները	28.04%	26.91%	23.02%
Մարզերի միջին՝ 1 շնչի հաշվով սեփական եկամուտները՝ մասհանումներով, որտեղ x=3	14,071	16,741	18,858
Ֆինանսական կարողությունների անհամաչափությունները	27.67%	26.53%	22.70%
Մարզերի միջին՝ 1 շնչի հաշվով սեփական եկամուտները՝ մասհանումներով, որտեղ x=4	14,654	17,336	19,480
Ֆինանսական կարողությունների անհամաչափությունները	27.46%	26.32%	22.53%
Մարզերի միջին՝ 1 շնչի հաշվով սեփական եկամուտները՝ մասհանումներով, որտեղ x=5	15,236	17,930	20,101
Ֆինանսական կարողությունների անհամաչափությունները	27.36%	26.24%	22.50%

Նախատիպային հաշվարկը կիրականացնենք մարզերում զբաղվածների թվաքանակի և միջին ամսական անվանական աշխատավարձերի կիրառմամբ: Հաշվարկների համար հիմք կհանդիսանան 2020-2022 թվականների տվյալները, քանի որ եկամտային հարկի համահարթ դրույքաչափ ՀՀ-ում կիրառվում է 2020 թ. հունվարի 1-ից սկսած: Բնականաբար, հաշվարկները կկատարվեն մարզերի մակարդակով՝ հաշվի առնելով համայնքների մասով այդ վիճակագրության բացակայությունը: Այնուամենայնիվ, փաստացի ցուցանիշների հետագա դուրսբերման համար անհրաժեշտ է ՀՀ ՊԵԿ գործիքակազմում իրականացնել բարելավումներ, որոնք հնարավորություն կտան ստանալ յուրաքանչյուր համայնքի ռեզիդենտների աշխատավարձերից վճարված եկամտային հարկի գումարները, քանի որ մասհանումները պետք է իրականացվեն ըստ համայնքների, իսկ ՀՀ-ում բյուջետային համակարգը երկմակարգակ է՝ պետական և համայնքային:

Առաջարկվող համակարգը ակնհայտ կերպով մեծացնում է համայնքների ֆինանսական կարողությունները: Ավելին, եկամտային հարկի մասհանումներ իրականացնելու առաջարկվող համակարգը համայնքների ֆինանսական կարողությունների մասով առկա անհամաչափությունների վրա ևս ունենում է դրական ազդեցություն, մասնավորապես, մարզերի համայնքների ֆինանսական կարողությունների միջինից շեղվածությունը, մասհանումների գործակցի մեծացմամբ՝ մինչև $x=5$, շարունակաբար նվազել է: Սա ենթադրում է, որ առաջարկվող կառուցակարգը և՛ մեծացնում է համայնքների ֆինանսական կարողությունը, և՛ նվազեցնում է համայնքների ֆինանսական կարողությունների անհամաչափությունները, և՛ մեծ բեռ չի դառնում ՀՀ պետական բյուջեի համար, քանի որ հաշվարկված գումարները պետական բյուջեի նկատմամբ ունեն չնչին մեծություն:

Բացի ֆինանսական կառուցակարգերի կատարելագործումից, ՀՀ տարածքային քաղաքականության կատարելագործման համար առաջարկում ենք՝

¹⁹ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ մշակված աղյուսակների և զծապատկերների հիման վրա:

1. Կատարելագործել վիճակագրության վարման ներկայիս մակարդակը, քանի որ ներկայումս ամբողջական վիճակագրություն վարվում է միայն մարզերի համար, սակայն անհրաժեշտ է վիճակագրություն վարել նաև համայնքային մակարդակով: Նշյալ գործառույթը կարող է վերապահվել ՀՀ վիճակագրական կոմիտեին՝ համապատասխան իր կանոնադրության:
2. Առաջարկում ենք քաղաքականությունը հիմնել տարածքային զարգացման անհամաչափությունների գիտական չափումների վրա: Այդ առումով ներկայացվել են տարածքային զարգացման անհամաչափությունների ամփոփ գնահատման երկու մոդելներ, որոնք մոդիֆիկացվելով կարող են կիրառվել նաև համայնքների համար: Նշյալ գործառույթը կարող է վերապահվել ՀՀ ՏԿԵ նախարարությանը՝ համապատասխան իր կանոնադրության:
3. Առաջարկում ենք վերանշակել ՀՀ տարածքային զարգացման ռազմավարությունը, մարզերի զարգացման ռազմավարությունները և համայնքների զարգացման ծրագրերը: Անհրաժեշտ է դրանք համապատասխանեցնել միջազգային փորձին և գիտական հիմնավորումներ ունեցող սկզբունքներին:
4. Տարածքային քաղաքականության վերափոխման համար, հիմնվելով միջազգային փորձի ուսումնասիրության վրա, առաջարկում ենք փոփոխությունները գործարկել որպես պիլոտային ծրագրեր:
5. ՀՀ տարածքային քաղաքականության էական հիմնախնդիր է ռեսուրսների՝ ֆինանսական, մարդկային և ժամանակային, ինչպես նաև որակի կառավարման համակարգերի բացակայությունը: Հետևաբար, անհրաժեշտ է մշակել և ներդրել նաև այդպիսի համակարգեր:
6. Հաշվի առնելով տարածքային քաղաքականության կարևորությունը՝ առաջարկում ենք, որ էականորեն շեշտադրվեն նաև ՀՀ տարածքային քաղաքականության և տնտեսական անվտանգության կապերը:
7. ՀՀ տարածքային քաղաքականության արդյունավետությունը կարող է բարելավվել նաև, եթե ներդրվեն նախագծային կառավարման սկզբունքներ, որոնց ադապտացման հնարավոր տարբերակ ևս մշակվել է ատենախոսության շրջանակներում և ներկացվել որպես առաջարկ:
8. Ատենախոսությունը, հիմնվելով ուսումնասիրված գրականության վրա, ամփոփվել է քաղաքականության կատարելագործման գործընթացում նախընտրելի և պակաս նախընտրելի մոտեցումների խմբավորմամբ ու ներկայացմամբ, որոնք կարող են լինել ուղենիշային ՀՀ տարածքային քաղաքականությունն առավել արդյունավետ դարձնելու համար:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** հատվածը ամփոփվում է ստորև ներկայացված ընդհանրացված եզրահանգումներում.

- Տարածքային զարգացման անհամաչափություններն օբյեկտիվ իրողություն են բոլոր երկրների համար, դրանք բնութագրվում են մի շարք ցուցանիշներով, երևույթներով և համակարգերով: Տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատման համար ատենախոսությունում մշակվել է մոդել, որը կարող է կիրառվել աշխարհի բոլոր երկրներում տարածքային զարգացման անհամաչափությունները գնահատելու համար: Արդյունքում, արձանագրվել է, որ տարածքային զարգացման անհամաչափություններ առկա են դիտարկված բոլոր երկրներում, սակայն այդ անհամաչափությունները որոշ երկրներում ընդլայնվում են, որոշներում՝ նվազում: Մոդելը հիմնված է տարածքային միավորների զարգացման աստիճանը գնահատելու վրա: Մշակված մոդելը կիրառվել է աշխարհի թվով 15 երկրների համար:

- ՀՀ տարածքային քաղաքականությունն ունի իրավակարգավորումների տեսքով ամուր հիմքեր, ինչպես նաև այն էականորեն կախված է այնպիսի գործընթացներից, ինչպիսիք համայնքների խոշորացումը և տարածքային աճի բևեռների ձևավորումն են: ՀՀ տարածքային քաղաքականությունը բնութագրող էական դրական հանգամանք է այն, որ ՀՀ-ում տարածքային քաղաքականությունը հիմնված է ռազմավարական կառավարման սկզբունքների վրա (եռամակարդակ՝ պետական, մարզային, համայնքային): Սակայն դրանց բնորոշ են մի շարք խնդիրներ. նախ, դրանցում առկա ձևակերպումները խնդրահարույց են, այսինքն, ձևական առումով դրանք ունեն հղկման կարիք, իսկ ահա բովանդակային առումով դժվար է ակնկալել, որ ռազմավարության իրագործման պարագայում ՀՀ-ում կարող է արձանագրվել տարածքային զարգացման անհամաչափությունների նվազում: Մարզային և համայնքային զարգացման ծրագրերում և ռազմավարություններում ևս առկա են խնդիրներ հատկապես բովանդակային և բառացի համընկնումների տեսքով:

- ՀՀ-ում տարածքային զարգացման անհամաչափությունները բավականաչափ բարձր են, ավելին, այդ անհամաչափությունները շարունակաբար ընդլայնվում են, որն ակնհայտ է ինչպես ցուցանիշների դինամիկ ու կառուցվածքային դիտարկումներից, այնպես էլ ինդեքսների հաշվարկից: ՀՀ մարզերի և երևանի զարգացման մակարդակը բնութագրող զարգացման ինդեքսները 2012-2021 թթ. ավելի են տարբերակվել, ինչը նշանակում է, որ ՀՀ-ում տարածքային զարգացման անհամաչափությունը մեծանում է: Սակայն վերջին տարիներին դիֆերենցումը ստացել է այլ բնույթ, քանի որ, բացի երևանից, մարզերի նկատմամբ առաջանցիկ զարգացմամբ աչքի է ընկնում նաև Սյունիքի մարզը: Բացի այդ ՀՀ տարածքային միավորների զարգացման ինդեքսների տատանման միջակայքն ունի ընդլայնման միտում, ինչը նշանակում է, որ ՀՀ-ում տարածքային զարգացման անհամաչափությունը մեծանում է: ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների ինդեքսը 2021 թվականին գերազանցել է 17%-ը, ինչը 2012 թվականի համեմատ էականորեն մեծացել է: Այդ ցուցանիշի փոփոխման թրենդն ունի դրական թեքվածություն, իսկ փաստացի ցուցանիշների շեղվածությունը թրենդից բավականաչափ փոքր է: Այդ պարագայում ակնհայտ է, որ ՀՀ-ում տարածքային զարգացման անհամաչափություններն ունեն ընդլայնման միտում:

- ՀՀ-ում տարածքային զարգացման անհամաչափությունների հաղթահարման համատեքստում էական հիմնախնդիր են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների առումով ինքնավարությունը և ֆինանսական անկախությունը, նշյալ հիմնախնդիրն իր արտահայտումն է գտել հետևյալ դրույթներում. համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակը բավականաչափ լայն է, ինչն արդյունք է լիազորությունների ապակենտրոնացման: Լիազորությունների ապակենտրոնացմամբ մարզպետների լիազորությունները հասցվել են նվազագույն ծավալի: Համայնքների ֆինանսական կարողությունները 2012-2022 թթ. շարունակաբար աճել են, սակայն մեկ շնչի հաշվով ֆինանսական կարողությունները մարզերի համայնքների միջև տարեցտարի ավելի են տարբերակվել: Մարզերի համայնքների ֆինանսական անկախության գործակիցը ևս բավականաչափ փոքր է, այն 2022 թվականին միջինում կազմել է 29%, ինչը լիազորությունների նման աստիճանի ապակենտրոնացման դեպքում չի խոսում բարձր արդյունավետության մասին: Այսինքն, տեղի է ունեցել լիազորությունների ապակենտրոնացում, սակայն այն չի ուղեկցվել ֆինանսական ապակենտրոնացմամբ:

- Հայաստանի Հանրապետությունում պետական բյուջեից համայնքային բյուջեներին հատկացվող դոտացիաների և սուբվենցիաների ծավալը գտնվում է ուղիղ համեմատական միջին կամ դրանից բարձր փոխկախվածության մեջ մարզերի տարածքային զարգացման ինդեքսի հետ, ինչը հանգեցնում է առկա անհամաչափությունների խորացման: Այսինքն, պետական և համայնքային բյուջեների փոխհարաբերությունները չեն օգտագործվում

հաղթահարելու համար տարածքային զարգացման անհամաչափությունները: Արդյունքում, մարզերի զարգացման մակարդակների և դրանցում ընդգրկված համայնքների բյուջետային ընդհանուր եկամուտների միջև առկա է բարձր մակարդակի ուղիղ համեմատական փոխկապվածություն, ինչը չի բխում տարածքային զարգացմանը համաչափություն հաղորդելու գաղափարախոսությունից:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են հետևյալ 10 գիտական հոդվածներում.

1. Գալստյան Հ., Բաղդոյան Գ., Դավթյան Կ., «ՀՀ տարածքային անհամաչափ սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշների կառուցվածքային և դինամիկ վերլուծությունը» // «Այլընտրանք» գիտական հանդես, 2021, №1 հունվար-մարտ, էջ 308-325:

2. Գալստյան Հ., Բաղդոյան Գ., Թաթոսյան Ք., «ՀՀ տարածքային զարգացման անհամամասնությունները և դրանց փոփոխման միտումները» // «Հանրային կառավարում», 2/2023, էջ 49-63:

3. Գալստյան Հ., Բաղդոյան Գ., «ՀՀ տարածքային անհամաչափ զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները արդի պայմաններում» // «Բանբեր ՀՊՏՀ», 2020, №1, էջ 38-53:

4. Գալստյան Հ., Բաղդոյան Գ., «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հնարավորությունները ՀՀ մարզերում և Երևանում» // «ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթությունները. ներքին և արտաքին մարտահրավերներ» թեմայով՝ ՀՊՏՀ 28-րդ գիտաժողովի նյութեր, Երևան, Տնտեսագետ 2021, էջ 289-301:

5. Badadyan G., «Assessment of disproportionate territorial development based on the example of the Republic of Armenia» // «Messenger of ASUE», 2023, №3, pp. 50-60.

6. Badadyan G., «The current implementation and expectations of execution of RA territorial development strategy for 2016-2025» // «Region and The World», 2022, №2, pp. 141-149.

7. Badadyan G., «The Foundations of the RA Territorial Development Policy» // «Region and The World», 2023, №5, pp. 127-132.

8. Badadyan G., «The improvement of the financial mechanisms of RA territorial balanced development» // «Region and The World», 2024, №1, pp. 181-187.

9. Galstyan H., Badadyan G., Tatosyan K., «Interrelations of municipal and state budgets in the Republic of Armenia and the impact of budget proportions on regional economic development» // «Messenger of ASUE», 2023, №2, pp. 72-86.

10. Hakhverdyan D., Badadyan G., «Assessing disproportionate territorial development: Insights from 10 countries» // Journal of Liberty and International Affairs, Vol. 9, №. 3 (2023), pp. 119-139,

<https://ejlia.com/index.php/jlia/article/view/1193?fbclid=IwAR3IbmCZTB66rxluwITSMNI5fg7txS1ar5zPWC8vOAxKHblzoZj36jvhVnE>. 2/28/2024 11:19 AM, indexed in Scopus.

**ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПОЛИТИКИ ГАРМОНИЧНОГО
ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗВИТИЯ РА**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика, управление хозяйством и его сферами».

Защита диссертации состоится 30-ого июля 2024 года, в 14⁰⁰, на заседании Специализированного совета 008 КВОН РА по экономике при Российско-Армянском университете. Адрес: РА, 0051, г. Ереван, ул. Овсепя Эмина 123.

РЕЗЮМЕ

Неравномерность территориального развития является серьезной проблемой для всех стран мира, и это означает, что практически невозможно выделить какую-либо одну страну, в которой отсутствовали бы определенные различия в развитии ее отдельных территориальных единиц. Однако проблема заключается в том, что данные различия имеют разные характеристики и достигают разных уровней в разных странах. Вне зависимости от этих характеристик и уровней, во всех странах существует необходимость реализации территориальной политики, которая будет способствовать устранению несоответствий между уровнями развития территориальных единиц в данной стране. Особенно актуальна эта проблема для стран с уровнем социально-экономического развития, схожим с Республикой Армения. Изучение специфики территориального развития РА, выделение его основных характеристик и существующих в данной сфере проблем, оценка масштабов асимметрии территориального развития и совершенствование реализуемой в Республике Армения территориальной политики становятся важными задачами в деле дальнейшего долгосрочного развития страны.

Основной **целью** исследования является оценка уровня различий в региональном развитии РА на современном этапе, выявление проблем территориальной политики РА, а также выработка механизмов, способствующих совершенствованию территориальной политики РА и решению стоящих перед ней задач. Для реализации поставленной цели в исследовании были поставлены и решены следующие задачи:

1. изучить сущность и основные особенности территориального развития и территориальной политики;
2. разработать модель, с использованием которой при наличии статистических данных будет возможно оценивать уровень асимметрии территориального развития различных стран, а также применять данную модель для ряда стран;
3. изучить международный опыт асимметрии территориального развития и выделить те страны, асимметрия территориального развития которых имеет тенденцию к уменьшению, что позволит локализовать в Армении определенные элементы территориальной политики стран, имевших в данной сфере успешный опыт;
4. изучить территориальную политику РА, национальные, региональные и муниципальные стратегии и программы территориального развития, выявляя имеющиеся в них проблемы и сильные стороны, на основе которых будет возможно усовершенствование данной политики;
5. осуществить оценку различий территориального развития РА, которая будет основана как на динамическом, так и на структурном изучении показателей, а также модельных оценках;

6. изучить объем полномочий органов местного самоуправления и источники финансовых ресурсов, необходимых для их имплементации, а также оценить, в какой степени финансовые возможности общин вытекают из идеологии обеспечения сбалансированного территориального развития в РА;
7. разработать механизмы, способствующие улучшению финансовых возможностей общин, приводящие к повышению эффективности политики сбалансированного территориального развития в РА и направленные на придание территориальному развитию РА сбалансированности.

Научная новизна исследования. В результате проведенных исследований, были получены следующие результаты, содержащие научную новизну:

1. На основе 9 показателей и экспертных оценок, характеризующих социально-экономическое развитие, была разработана модель оценки индексов развития территориальных единиц и асимметрии регионального развития, которая была применена автором для 16 стран, в том числе, для Республики Армения (на основе данных за 2012-2021 гг.).
2. Для качественной и количественной оценки диспропорций регионального развития РА автором разработана и предложена модель на основе 19 показателей и факторного анализа с использованием статистического пакета SPSS (на основе данных за 2021 год).
3. Разработана методология, основанная на применении квантильных групп и сравнении результатов, с целью выявления соответствия между бюджетными возможностями и уровнями развития общин РА.
4. Разработаны механизмы, направленные на обеспечение соответствия финансовых возможностей и уровня развития общин, в том числе, представлены модели расчета дотаций и осуществления вычетов по налогу на доходы и налогу на прибыль, даны оценки их эффективности.

BADADYAN GAGIK ZARMAVIR

MAIN ISSUES OF THE PROPORTIONATE TERRITORIAL DEVELOPMENT POLICY OF THE RA

Abstract of the thesis for receiving the degree of Doctor of economics in the specialty 08.00.02 – «Economics, Management of the Economy and its Spheres».

The defense of the thesis will take place on the 30th of July, 14⁰⁰, at 008 Council of Economics of the HESC RA at Russian-Armenian University. Address: 123 Hovsep Emin str., Yerevan, 0051.

ABSTRACT

The disparity of territorial development is a major problem for all countries of the world, which implies that it is practically impossible to single out any country where certain disparities are not present. But the problem is that these disparities have different characteristics and reach different levels in different countries. Regardless of these characteristics and levels, there is a need in all countries to implement a territorial policy that will contribute to the elimination of discrepancies between the levels of development of territorial units in a given country. This problem is especially urgent in countries with such a level of socio-economic development as the Republic of Armenia. In this case, the study of the asymmetries of the territorial development of RA, the extraction of its main characteristics and existing problems, the measurements of the asymmetries of the territorial development and the improvement of the territorial policy implemented in the Republic of Armenia are simply a necessity.

The *main goal* of the thesis is to assess the current level of regional development disparities in RA, to identify the problems of RA territorial policy and to put forward structures that can contribute to the improvement of RA territorial policy and solving problems. The following objectives were set for the realization of this goal:

1. to study the essence and main features of territorial development and territorial policy,
2. to develop a model, with the use of which, in the presence of statistics, it will be possible to dynamically measure the degree of disparities in the territorial development of different countries, as well as to apply the said model for a number of countries,
3. to study the international experience of territorial development disparities and to single out those countries whose territorial development disparities tend to decrease, which will allow to localize certain elements in the RA by studying the territorial policies of countries with such successful experience,
4. to study the territorial policy of the RA, national, regional and community strategies and programs of territorial development, identifying the problems and strengths in them, on the basis of which it will be possible to improve the policy,
5. to carry out an assessment of territorial development disparities of the RA, which will be based on both dynamic and structural study of indicators, as well as model assessments,

6. to examine the scope of powers of local self-government bodies and the sources of financial resources necessary for their implementation, as well as to assess to what extent the financial capabilities of communities derive from the ideology of ensuring balanced territorial development in RA,
7. to develop mechanisms that will contribute to the improvement of the financial capabilities of communities, will lead to an increase in the effectiveness of the policy of territorial proportional development in the RA and will be aimed at giving proportionality to the territorial development of the RA.

Scientific novelty of the research. As a result of the studies and analyzes carried out within the framework of the thesis, the following results containing scientific novelty were put forward:

1. On the basis of 9 indicators characterizing socio-economic development and expert assessment-questionnaires, a model was developed for the assessment of territorial unit development indices and regional development disparities, which was used by the author for 16 countries, including the Republic of Armenia (with the data for 2012-2021),
2. For the qualitative and quantitative assessment of regional development disparities in RA, the author developed and proposed a model based on 19 indicators and factor analysis using the SPSS statistical package (with the data for 2021).
3. A methodology based on the application of quantile groups and comparison of results was developed in order to reveal the correspondence between the budgetary capacities and development levels of RA communities.
4. Structures aimed at ensuring the compliance of the financial capabilities and development levels of the communities were developed: the models for calculation of dotations and the implementation of deductions from income tax and profit tax were presented, and their effectiveness assessments were given.

